

ԿԻՆԻԿԱՅԻՆ ԴՐՎԱԳՆԵՐ

ՄԻՍԱԶ Հ ՃԵՎԱԿՆԻՐՃՅԱՆ

ԳՌՆԵՐԻ ՎԱՆՔԸ

ԺԳ-ԺԴ դարերում Կիլիկիայի Հայկական պետության ճշմարիտ վանքերից մեկն էր Գոմերը: Այն ճանաչված էր որպես գրչության ճշմարիտ կենտրոն և մանրամասնության ուրույն դպրոց: Ունեցել է կազմակերպված գրչատուն և հարակից կառույցներ: Գոմեր վանքի գործունեությանը մեծապես նպաստել են Հեթում Ա թագավորի եղբայր Հովհաննես արքայադուռը և զանազան արքայադուռներ¹: Նրա վամահայրության տարիներին է, որ Գոմերը ճանաչում էր գտել որպես գրչության, մանրամասնության և կազմարարության արվեստի հայտնի կենտրոն:

Գոմերի մանրամասնության արվեստի ոճը սերտորեն առնչվել է շրջակա գրչության հետ՝ Ակներ վանքի և Բարձրբերդի արվեստի ոճերի հետ: Իբրև արվեստասեր, մատենագիր, գրիչ, մանրամասնիչ և բարերար, Հովհաննես արքայադուռը, իր արքունական ազդեցիկ դիրքի շնորհիվ, Գոմեր վանքի բարգավաճման համար ստեղծել էր լայն հնարավորություններ, կապվածքներով և այլ տեսակի եկամուտներով ապահովել էր վանքի նյութական բարօրությունը, վանքը օժտել շնորհալի գրիչներով, մանրամասնիչներով, փիլիսոփաներով² և ձեռագիր մատյաններ կազմող արհեստավորներով: Ինքը ևս անձամբ մասնակցել էր ձեռագիր մատյանների պատրաստման գործին, բազմաթիվ ձեռագրերի համար եղել պատվիրատու:

Հովհաննես արքայադուռը համար գրած և նկարազարդված տարբեր բովանդակությամբ ձեռագիր մատյաններից չորսը պահվում են Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում³: Դրանք գրվել ու նկարազարդվել են Կիլիկիայի Բարձրբերդ գավառի Տիրոջ գյուղում, Ակներ և զուցե Գոմեր վանքերում: Հիշյալ և մերձակա վայրերում աշխատող գրիչներին էլ պատվիրել և ապա ստացել է բազմաթիվ ձեռագրեր: Դրանից յոթը նույնպես պահպանվում են Մատենադարանում⁴:

¹ Հովհաննես արքայադուռը (1220/30-1289 թթ.) եղել է. «...եպիսկոպոս ճանաչված աստուածապաի դղեկին Մալեանի եւ մասին ինչ Բարձրբերդոյ, եւ նոյն տեսուչ հոշակելի սուրբ ուխտին Գոմերոյ»: Նրա թեմի առաջնորդամիտն է եղել Գոմեր վանքը: 1286 թ. նա արդեն արքեպիսկոպոս էր: Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Երևան, 1946, հտ. Գ, էջ 598: Ղ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 144-147: Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռ. հմր. 4119, թերթ 2ա:

² «Փիլիսոփաները» ոչ միայն երաժշտության, այլև գեղարվեստի մյուս ճյուղերի, այդ թվում՝ մանրամասնության, նկարչության, քանդակագործության և արվեստի այլ գործերի «կոմպոզիցիաները» կազմողներն էին:

³ Ձեռ. հմր. 197, 1315, 3710, 5525:

⁴ Ձեռ. հմր. հմր. 195, 196, 345, 470, 4119, 4243, 4947:

Գոմերում գրված բազմաթիվ ձեռագրերից առնվազն չորսը պահվում է Մատենադարանում⁵։ Այդպիսիք կան նաև վաշինգտոնում՝ Ֆրիդի ժողովածոում, Մյունխենի Արքունի Մատենադարանում⁶, Վենետիկի Ս. Ղազարի Մխիթարյան միաբանության մատենադարանում, Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարանում⁷, Երուսաղեմում⁸ և այլ վայրերում։

Հովհաննես արքաներայրը ունեցել է բազմաթիվ աշակերտներ, որոնք անվանի են դարձել գրչության, մանրանկարչության և գրքի կազմարարության արվեստում։ Նրանց թվում են Ստեփանոս Վահկացի և ճշամավոր մանրանկարիչ Սարգիս քն. Պիծակի հայր Գրիգոր Պիծակ մանրանկարիչները, Կոստանդին գրիչը⁹, Վարդան Բարձրբերդցի (Փոքր) մատենագիրը¹⁰ և ուրիշներ։ Բոլորն էլ եղել են ԺԳ դարի չորրորդ քառորդի արվեստագետներ։ Արվեստի ոճական առանձնահատկությունների տեսանկյունից ելնելով, կարելի է ասել, որ Գոմերի վանքի գրչատունը գրչությամբ և մանրանկարչությամբ զբաղվողների ևս պետք է համարել Հովհաննես արքաներորդ աշակերտներ։

Գոմերի վանքը կոչվել է նաև «անապատ», «սուրբ ուխտ» կամ «հռչակելի սուրբ ուխտ Գոմերոյ»։ ԺԳ դարի վերջին քառորդում Կիլիկիայի Հայկական թագավորության կարևորագույն վանքերից մեկն էր։ Ըստ աշխարհագիր Վարդան վարդապետի տված տեղեկության. «Կիլիկիե, որ է Սիս, ՚ի մէջ կայ Ասորոց եւ Գամրաց։ Ունի... եւ զվանորայս զԴրազարկ, զԱրքակաղմին, զՍկետի, եւ զԳոմերու սուրբ ուխտն»¹¹։

Գոմեր վանքից են նաև Մխիթար Ա Գոմերցի կամ Հոռմնցի (կթդ. 1341-1355 թթ.) Կաթողիկոսը (մինչ այդ նա Գոմերի վանքի վանահայրն էր), որի ժամանակ էլ եղել 1343 թ. Սսի եկեղեցական ժողովը՝ Կաթողիկ Եկեղեցու հետ միաբանության խնդիրը քննարկելու համար։

Գոմեր վանքը կառուցված էր վանքապատկան մույնամուն գյուղում։ Վանքապատկան կալվածքներից մեկն էլ Տիրոջ գյուղն էր։ Այդ մասին հետևյալն է վկայում գրիչ Կոստանդին Ավդղցու գրած և մանրանկարիչ Ստեփանոս Վահկացու ու Գրիգոր Պիծակի¹² ծաղկած «Մասունք Նոր Կտակարանի» ձեռագրի հիշատակարանը, որում ասվում է. «Գրեցաւ սուրբ տառս մորակերտ տաճարին, որ յանուն Աստուածասուրբ Հոգոյն կանգնեցաւ ՚ի

⁵ Զեռ. հմր. հմր. 195, 196, 345, 182:

⁶ Յուզակ հայերեն ձեռագրաց Արքունի Մատենադարանին ՚ի Միւնխեն, կազմեց Գրիգորիս վրդ. Գալեմբերտան, Վիեննա, 1892, էջ 7:

⁷ Հ. Յակոբոս Տաշեան, Յուզակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ՚ի Վիեննա, 1895, հտ. Ա, գիրք Բ, էջ 634-635, ձեռ. հմր. 245:

⁸ Նորայր եպս. Պողարեան, Մայր Յուզակ հայերեն ձեռագրաց Սրբոց Յակոբեանց մատենադարանին, հտ. Զ, Երուսաղեմ, 1972, էջ 262-263, հմր. 1864:

⁹ Տե՛ս Լ. Ռ. Ազարյան, Կիլիկյան մանրանկարչությունը ԺԲ-ԺԳ դդ., Երևան, 1964, էջ 77, 78:

¹⁰ Ղ. Ալիշան, ճշվ. աշխ., էջ 147: Հ. Աճառյան, ճշվ. աշխ., հտ. Ե, էջ 92:

¹¹ «Աշխարհացոյց վարդապետ վարդապետի», համեմատեց Հայկ Պէրպէրեան, Փարիզ, 1960, էջ 24, տող 232-237 և էջ 50, տող 320-324:

¹² Այս երեքն էլ Հովհաննես արքաներորդ աշակերտներն են:

գեաղմ Տիրոջ, որ է սեփական ժառանգություն սուրբ անապատին Գոմերոյն, որոց Տէր հովանաւոցի. ամէն»¹³:

Հիշատակարանի բովանդակությունից պարզվում է, որ Հովհաննես արքեպիսկոպոս իր աշակերտներին պատրաստել տված հիշյալ ձեռագիր մատյանը նվիրել է Տիրոջ գլուխի նորակառույց Աստվածասուրբ Հոգի տաճարին: Նախքան վերջինիս հիմնարկումը, մա 1272 թ. Տիրոջ գլուխում իր անձնական միջոցներով Ս. Հովհաննես Ավետարանչի անունով մի մատուռ էր կառուցել՝ կատարելով և մրա մերքին հարդարանքը:

Այդ մասին են վկայում 1286 թ. Հովհաննես արքեպիսկոպոս զրաձ Ավետարանի հիշատակարանի տողերը¹⁴:

Հիշատակարաններից հայտնի է դառնում, որ Տիրոջ գլուխը որպես կալված Գոմեր վանքին պարգևողը եղել է Մեծն Լևոն Ա (1187-1219 թթ.) թագավորը: Սմբատ սպարապետը կազմել էր Լևոն Ա-ի թագադրության հանդիսավոր արարողության մասնակիցների ցուցակը, ուր նշված է Բարձրբերդի տեր՝ «իշխանն Բարձրբերդոյ Գեորգ»-ը¹⁵: Վերջինս Ռուբինյան պարոն Մլեհ (1170-1175 թթ.) իշխանաց իշխանի որդին էր և Բարձրբերդին տիրում էր հորից մնացած ժառանգության հիմունքներով: Սակայն՝ Կիլիկիայի Հայկական պետությունում ընդունված կարգ էր, համաձայն որի Բարձրբերդը ամրոցը պատկանելու էր տիրակալին կամ մրա կամքով տրվելու էր արքունի ընտանիքից վստահելի և հավատարիմ մի իշխանի:

Բարձրբերդն առաջին անգամ բյուզանդացիներից իր զինու զորությամբ զրավել էր Ռուբինյան պարոն Թորոս Ա-ն: Ուստի այն համարվում էր Ռուբինյան տոհմի անձեռնմխելի սեփականությունը և իշխանության տիրակալի տիրույթը: Որպես ավատատիրական իրավունք, Բարձրբերդի տիրոջն էր պատկանում մաս Բարձրբերդի իշխանության սահմաններն ընդգրկող գավառը: Դժվարամտաչելի և իշխանամիստ այս ամրոցում էր գտնվում Կիլիկիայի Հայկական պետության արքունի գանձատունը և բանտը: Բարձրբերդում ընդհանրապես բանտարկվում էին ապստամբությամբ, դավաճանությամբ և քաղաքական այլ հանցանքներով մեղադրվող իշխանները:

Մինչ Լևոն Մեծագործի թագադրվելը, Բարձրբերդը թողնվել էր Մլեհի որդուն՝ Գեորգ իշխանին: Թագադրվելուց մի որոշ ժամանակ հետո Լևոն Ա-ն հոգուտ արքունիքի է զրավում Բարձրբերդի իշխանության տիրույթը¹⁶: 1208 թ. այն տրվում է Լևոն Ա-ի քեռու որդի Կոստանդին մեծ իշխանին, ապագա թագավոր Հեթում Ա-ի հորը: Լևոն Ա-ի՝ Ակներ վան-

¹³ Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հտ. 1, Երևան, 1984, էջ 843, ձեռ. հմր. 196, քննարկ թերթ՝ 76բ:

¹⁴ Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Վասպուրականի, կազմեց Եր. Լալայան, Թիֆլիս, 1915, էջ 107-108: Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռ. հմր. 5525, թերթ 225բ-226ա: Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դ., կազմեց Արտ. Մաթևոսյան, Երևան, 1984, էջ 592-593:

¹⁵ Սմբատյայ Սպարապետի տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 210:

¹⁶ 1208 թ. թագավորի դեմ դավադրություն նյութելու և զանի մկատմամբ հավակնություններ տաճելու ամբաստանությամբ ձերբակալվում և Սիսի բերդում բանտարկվում է Գևորգ իշխանը: Վերջինիս բանտում կուրացնելուց հետո ազատ են արձակում (1214 թ.): Դրանից հետո մա քաշվում է հոր կառուցած Մեծքարի վանքը և ապրում մենակյացի կյանքով: Նա Լևոն Ա-ի հորեղբորորդին էր: Թաղված է Մեծքար վանքի գավթում, հոր գերեզմանի կողքին:

քը կառուցելու (1198-1203 թթ.)¹⁷ և Գոմեր վանքին Տիրոջ գյուղը նվիրելու թվականները հանդիպում են 1198-1208 թթ. միջև: Այդ ժամանակահատվածում էր, որ Լևոն Ա թագավորը Բարձրբերդի իր սեփական տիրույթից կալվածքներ էր նվիրել հիշյալ վանքերին:

Առայժմ պարզված չէ Գոմեր վանքի կառուցման թվականը: Այն ունեցել է եկեղեցի «...ի գաւառիս Կիլիկիոյ ՚ի սուրբ անապատն Գոմեր կոչեցեալ, ընդ հովանեաւ սուրբ եւ աստուածակիր ճշմանն Կայտեմի կոչեցեալ, եւ Սրբոյն Սիւանի մար մեր, որ է մերձ յաստուածապահ դէակն Բերդ Բարձր կոչեցեալ»¹⁸:

Գոմերում եղել էր տոհմական դամբարանատուն, որը հավաստվում է 1248 թ. Հոռմկլայում, Կյուրակոս գրչի գրած Ավետարանի հիշատակարանից: Պարզվում է, որ ձեռագիր մատյանը ստացող Հովհաննես Գոմերցի եպիսկոպոսը այն կտակել է Գոմերի վանքին, ուր թաղված էին նրա ազգականներից շատերը¹⁹:

Գոմեր վանքի դիրքի մասին ցարդ չկային ստույգ տեղեկություններ: Դ. Ալիշանը տեղյակ չի եղել Ակների, Գոմերի, Մոլևոնի, Մյունի, Բարձրբերդի և դրա շրջակա այլ բնակավայրերի տեղագրությանը²⁰:

Հայկական Հանրագիտարանում սխալմամբ վանքը տեղադրվել է Մոլևոն գավառում, որը ոչ մի աշխարհագրական առնչություն չունի Գոմեր վանքի հետ²¹: Այդ սխալի պատճառն է հանդիսացել Հովհաննես արքեպեոսը Մոլևոնի գավառի և Բարձրբերդ գավառի մի մասի հոգևոր առաջնորդ լինելու հանգամանքը: Այդ եմ վկայում Կիրակոս վարդապետի գրած «Մեկնութիւն գործոց Առաքելոց. Համառոտ ժողովումն մեկնութեան Ս. մարգարէին Եսայեայ» ձեռագիր մատյանի հիշատակարանի հետևյալ տողերը. «Առ խնդրոյն համառոտիս տէր Յոհաննէս Արքայեղբայր եւ ետ մահամզաց աստուածապահ դէկին Մոլևոնի և մասին ինչ Բարձրբերդոյ եւ նոյն տեսուչ հոչակելի սուրբ ուխտին Գոմերոյ...»²²:

Հիշատակարանի այս տեղեկությունը հանգեցրել է այն սխալ եզրակացության, որ թեմի առաջնորդարան Գոմերի վանքը գտնվել է Մոլևոն գավառում: Դ. Ալիշանի մեկ այլ վրիպումն է Մոլևոնը Մյունի հետ մույնացնելը²³: Մոլևոնը՝ Կիլիկյան Տավրոսներում լեռնային ամրոց էր: Բյուզանդական կայսրության ժամանակ Մոլևոնը համարվում էր բերդաքաղաք: Կիլիկիայի Հայկական պետության ժամանակ իշխանահատ բերդ էր: Հսկողութե-

¹⁷ Տե՛ս Ս. Մելիք-Բախշյան, Ակների գրչության դպրոցը, «Բանբեր Երևանի համալսարանի», 1968, հմր. 3, էջ 144: Մ. Լ. Ծեվակիրճյան, Կիլիկիայի Ակներ վանքի տեղադրությունը, «Պատմա-բանասիրական հանդես», 1982, հմր. 3, էջ 126:

¹⁸ Դ. Ալիշան, ճշվ. աշխ. էջ 144; 1236 թ. Գոմերում՝ Հովհաննես արքեպեոսը պատվերով գրված Ավետարանի հիշատակարան: Տե՛ս Ֆրիթի հավաքածու, A. Sanjian, A catalogue of medieval armenian manuscripts the United States, Los Angeles-London, 1976, էջ 737: Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դ., էջ 332:

¹⁹ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դ., էջ 241: Գարեգին կթդ. Յովսէփեան, Յիշատակարանը ձեռագրաց, հտ. Ա., Ամթիլիսա, 1951, էջ 984:

²⁰ Դ. Ալիշան, մույն տեղում:

²¹ Հայկական Սովետական Հանրագիտարան, հտ. 3, 1977, էջ 183:

²² Յուզակ ձեռագրաց խաչիկ վարդապետի Դադեան, Յակոբ Յ. Թովմեան, Մասն Ա., վարդաքաղաք, 1898, էջ 59, բնագրի թերթ 7:

²³ Դ. Ալիշան, ճշվ. աշխ., էջ 142:

յաճ տակ էր պահում Կուկլակի կիրճի արևելյան կողմից անցնող արահետները: Այժմ կոչվում է Միլվան կալե և գտնվում մուսանուն գյուղի մոտ:

Մյուսը՝ Կիլիկիայի Հայկական պետության Միջերկրականի ծովամերձ բերդերից մեկն էր: Գտնվում էր Դաշտային Կիլիկիայի հարավային մասում: Հին հույները, հռոմայեցիները և քյուզանդացիները այն անվանում էին Մալլոս կամ Մալլոն, իսկ արաբները՝ Մյուն: Կիլիկիայի հայերը գործածել են տեղանվան արաբական Մյուն ձևը: Մոլունի և Մյունի միջև (ուղիղ չափումով) հեռավորությունը 83 կմ է:

Հայկական Հանրագիտարանը ևս, առաջնորդվելով Ղ. Ալիշանի տեղորոշմամբ, կրկնել է մուսն սխալը և երկու (Մոլուն և Մյուն) տեղանունների մասին գոյություն ունեցող տեղեկությունների խառնուրդից ստացվել է «Մոլուն» հոդվածը: Մյունի մասին հայտնի տեղեկությունները վերագրվել են Մոլունին: Հոդվածում Մոլունը տեղադրվել է Լամբրոն բերդից արևմուտք, որը սխալ է²⁴: Այսպիսի սխալ տեղեկությունների առկայության պայմաններում, Գոմերի տեղը դժվար է որոշել: Սակայն, գոյություն ունի Գոմեր վանքի դիրքը մշտն Գրավոր տեղեկություն, ըստ որի այն եղել է Բարձրբերդի մոտ, Կարմիր լեռան միջավայրում:

1303 թ. Գոմեր վանքում Մարտիրոս վարդապետի ընդօրինակած հիշատակարանի հետևյալ տողերում մշված է գրչության վայրը. «... գրեցի զսա ՚ի վանքս հոչակելի, որ Գրոմեր կոչի, մերձ ՚ի Բարձր կոչեցեալ Բերդ, ՚ի մեծ թուականիս Հայոց ՉԾԲ (1303), ՚ի յամսեանն Մայիս...»²⁵:

Բարձրբերդի մոտ և Կարմիր լեռան միջավայրում եղել է մաս Կիլիկիայի Լիսանկա անապատը, որը կառուցել էր մուսն թագավորահայր Կոստանդին մեծ իշխանը: 1270 թ. Բասիլ գրչի գրած Աւետարանի հիշատակարանում հետևյալ տողերով է մկարագրված զըրչության վայրը. «Արդ, գրեցաւ սա ՚ի լեռոնս Կարմիր, մերձ յանառիկ դեակն Բարձր Բերդ, ՚ի վանքս Լիսանկայ, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին և Սուրբ Նշանին»²⁶:

1278 թ. Հովհաննես արքանդէոր Գոմեր վանքում գրել տված «Լուծմունք գրոցն Եագրի Պոնտացոյ» ձեռագրի հիշատակարանում հետևյալն է մշված Գոմերի տեղագրության մասին. «... ՚ի թուականիս Հայոց Չիէ (1278), ՚ի լեռոն Կարմիր, ՚ի սուրբ հրեշտակաբնակ անապատն Գոմեր»²⁷:

Այս տեղեկություններից պարզվում է, որ Գոմեր և Լիսանկա վանքերը եղել են Բարձրբերդ գավառում, մուսանուն ամրոցի մոտակայքում և Կարմիր լեռան միջավայրում:

Հովհաննես արքանդէոր 1280 թ. Գոմերում ընդօրինակած Ավետարանի հիշատակարանում մշված է, որ Գոմեր վանքը կամ անապատը գտնվել է «... ՚ի զահս Կիլիկիոյ, ՚ի զաւառն Բերդին Բարձր ասացելոյ, այսինքն՝ Լեռնային Կիլիկիայի Բարձրբերդ գավառում: Նույն հիշատակարանում կամ այլ հետաքրքիր տեղեկություններ. «... ձեռամբ իմով գրեցի

²⁴ Հ. Ս. Հանրագիտարան, հտ. 7, Երևան, 1981, էջ 689:

²⁵ Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուն Մատենադարանի, էջ 751, ձեռ. հմր. 182, քննարկ թերթ 205ա: Լ. Ս. Խաչիկյան, ԺԴ դ. հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1950, էջ 16:

²⁶ Ղևոնդ Փիրղալեմեան, Նշխարք պատմութեան հայոց, հտ. Բ, էջ 39-40: Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռ. հմր. 4515: Հայ. ձեռ. հիշ. ԺԴ դ., էջ 397:

²⁷ Ղևոնդ Փիրղալեմեան, մշվ. աշխ., հտ. Ա, էջ 44-46: (Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. հմր. 4515, 1884 թ., վաճ): Հայ. ձեռ. հիշ. ԺԴ դ., մշվ. աշխ., էջ 486:

տակ» կոչած գետակից: Ուրեմն՝ Կոստանդնուղը պիտի գտնվեր Բարձրբերդ գավառում հոսող Կարմիր գետակի ավազանում, Կարմիր լեռան շրջանում:

Գոմեր վանքի աշխարհագրական դիրքի տեղադրության առումով ուշագրավ է նրա անվան ստուգաբանությունը: Գոմեր տեղանունը կազմված է «գոտ» գոյականից ու «մեր» հոգնակի մասնիկից՝ Գոտ + մեր

«Գոտ» բառն ունի բազմաթիվ հոմանիշներ: Դրանց թվում՝

Գոտ = թեժ, հորդ:

Գոտ = 1. Զրավազան = ջրկուր, ջրաման, կուր (թուրք. Oluk), մատակ:

2. Հնձան ա) Առաքատ: ք) Մզարան: մզանոց, գոտ, մզոց, կոխարան, շիրատուն, չաքազ, գաքաս, սալք:

3. Զորոդան = Զրիկ, ճուղտրակ (տանիքի), չրփող, շոմատակ, կուտջրվան, գոտ, չոիկ, մավղան:

Գոտ բառի բազմաթիվ իմաստներից պետք է ընդունել «ջրորդան»-ը: Նրան համապատասխանող թուրքերեն «օլուք» (oluk) բառն ունի երկու նշանակություն:

1. Տանիքի վրայի ջրուղի, ջրորդան:

2. Գետակով կամ առվակով ձոր:

Այս վերջինս համապատասխանում է Լեոնային Կիլիկիայում, Գոմեր վանքի գտնված միջավայրի աշխարհագրական բերդ-ռելիեֆի մկարագրությանը: Բազմաթիվ խորը ձորերով և գետակներով կտրատված լեռնային միջավայրում գտնվող Գոմեր վանքի անունը պետք է ընկալել իբր «Գետակով ձորերի վանք» ձևով: Հետևաբար՝ այն պիտի գտնվեր մի գետակի կամ ձորագետի եզրին, ինչպիսին եղել էր Կոստանդնուղ գյուղաքաղաքը Կարմիր գետակի ավազանում³²:

Խնդրո առարկա միջնադարյան Կիլիկիայի Հայոց Գոմեր և Լիսոնկա վանքերը, Կոստանդնուղ գյուղաքաղաք, Տիրոջ գյուղ, Կայտեն կամ Կատենա բերդ, Պողոսական անապատ, Կարմիր գետակ և Կարմիր լեռ վայրերը գտնվում են Լեոնային Կիլիկիայի արդի Կարսանոլ (Karsanci) կոչվող գավառակում (մահիե): Վերոհիշյալ տեղանուններից պահ-

³² Գոտ բառի հոմանիշներից են «հորդ» և «թեժ» բառերը: Դրանց համապատասխանող թուրքերեն կըզզըն (kizgin) բառով կազմված և Կըզզըն-տերեն (Kizgindere) կոչվող գետակի անունը կա Լեոնային Կիլիկիայի հիշյալ միջավայրում: Կըզզըն-տերեն գետակի անվան հայերենը գուցե համապատասխանում է Գոմերին: Գոտ բառի հոմանիշներից «ջրավազան»-ը եթե հասկանանք որպես բազմաթիվ գետակների կազմած ցանցի ընդգրկած միջավայրը՝ ջրավազան իմաստով, ապա դա կհամապատասխանի Գոմեր վանքի գտնված Կարմիր լեռան շրջանի Կարմիր-գետակի ջրավազանին, որը այժմ կոչվում է Կում Պյունիկ-տերեն: Դրա մեջ է թափվում Կըզզըն-տերեն գետակը:

Գուցե պատահականության արդյունք չլինի «գոտ» բառի հոմանիշներից «գաքաս» և «սալք» բառերի համադրումից կազմված թուրքերեն Կաքասաքալ բարդ բառը, որը միաժամանակ թե՛ տեղանուն է և թե՛ վերոհիշյալ աշխարհագրական շրջանում այժմ գոյություն ունեցող երկու գյուղերի անունն է: Թուրքերեն «կաքասաքալ» նշանակում է «խոշոր սորոք», որն առհասարակ գործածվում էր եկեղեցական կառույցներ ունեցող հին բնակավայրերի համար: Կիլիկիայում այժմ կան Կաքասաքալ անունով բազմաթիվ բնակավայրեր:

ա) Սսի հյուսիս-արևմտյան կողմը և Անդուլ բերդից արևմուտք գտնվում է Փոսթ-Կաքասաքալ կոչվող արևելատեղանուն բլուրը և գյուղը:

բ) Աղանա քաղաքի հյուսիս-արևմտյան կողմը, Ցախտու գետի մոտ Կաքասաքալ անունով գյուղ:

գ) Սսի արևելյան կողմը և Արքակաղնի վանքից հարավ, Կաքասաքալ անունով վայր:

պանվել են մասամբ փոփոխության ենթարկված երեք բնակավայրերի ամուններ: Դրանցից մեկը Տիրոջ գյուղի ամունն է, որին թուրքերը քիչ աղավաղելով և վերափոխադրելով իրենց լեզվով, մախ կոչել են Դիրլիկ (Dirlik, Տիրլիք): Դա կազմվել է Տիրոջ տեղանվան առաջին «տիր» մասից և թուրքերեն «լիկ» մասնիկից, որը համապատասխանում է հայերեն «նոց կամ անոց»-ին: Երկուսի համադրումից առաջացել է գյուղի *Դիրլիկ* անունը: Միջնադարյան Տիրոջ գյուղը այժմ կոչվում է *Դարըլըկ* (Darilik): Գյուղը գտնվում է Կարսամուղից դեպի հյուսիս-արևելք 6-7 կմ հեռու: Դարըլըկից արևելք, այս բնակավայրի և Պառատիս (Սեյհան) գետի միջև կան Կըզըլ-տամ և Կյավուր-քյոյի ամունով գյուղեր:

Մասամբ փոփոխության ենթարկված վերոհիշյալ տեղանուններից երկրորդը Կոստանդնոց գյուղաքաղաքի ամունն է, որն այժմ կոչվում է *Կարսանտը*: Կոչվել է մահ *Կարսանտողլու* տոհմական ձևով³³:

Կարսանտըից արևմուտք 5 կմ և դեպի հյուսիս-արևմուտք՝ 8 կմ հեռու, կան Կաբասաքալ ամունով երկու գյուղակներ: Կարսանտըի հյուսիսի կողմը 2-3 կմ հեռու, Կըզըլ-տերե (Կիլիկիայի Հայոց *Կարմիր*) գետակը մի կիսաշրջան կազմելուց հետո, մեղձ ձորերով հոսում է դեպի հարավ-արևելք և Ակներից հյուսիս՝ 10 կմ հեռու մի վայրում խառնվում է Պառատիս գետի ջրերին: Կարսանտըից հյուսիս՝ Կըզըլ-տերեյի աջ եզրին, *Կըզըլ-տաղ* (Կիլիկիայի Հայոց *Կարմիր լեռ*) վայրում պահպանվել է այժմ *Կարսանտը կալեսի* ամունով միջնադարյան ավերված մի ամրոց: Սա՝ Կոստանդնոց գյուղաքաղաքի հետ հիշատակվող *Բարձրբերդն* է:

Նրա դիմաց Կըզըլ-տերեին է միանում Կըզըլն-տերեի, Աճըման-սուի և Հայ-հայ տերեի ջրերից առաջացած գետակը, Ակինեկ տաղ (2056 մ) լեռան կողերից և Կաբասաքալ գյուղից հոսող գետակները և երկրորդ Կաբասաքալ գյուղից հոսող Ջիյարեթ-չայ գետակը: Թուրքերեն «գիյարեթ» մշանակում է «ուխտատեղի, այց», ուստի Ջիյարեթ-չայ գետակի թարգմանությունը կլինի «ուխտատեղիի կամ ուխտավայրի ձորի գետակ»:

Կարսանտըից արևմուտք 4 կմ հեռու, Ջիյարեթ-չայ և Կըզըլ-տերե գետակների իրար միախառնման վայրի մոտ գտնվող այս *Կաբասաքալ* գյուղում էր Հայոց եկեղեցական կամ վանական կարևոր մի հաստատություն, որի համար էլ այդ կոչումին պատշաճ անուններ են տրվել գյուղին և գետակին:

Քիչ փոփոխության ենթարկված տեղանուններից երրորդը, Կարմիր լեռան *Լիսանկալու* կամ *Լիսոնկալու* անունն է: Դա հիշատակվել է որպես վանքի անուն, 1270 թ. Լիսան-

³³ Այդ տեղանունը թուրքերը կազմել են թերևս Կարս և Կոստանդին անունների համադրումից: Սկզբի «Կարս» մասը գալիս է մուսլամոն քաղաքից, որի մի հատվածում մինչև ԺԵ դարը բնակվել են Կիլիկյան Տավրոս լեռներում ապրող թուրքմենները: Իսկ վերջի «անտը» մասնիկը Կոստանդին անունի վերջին մասն է: Կիլիկիայում եղել են Կարս անունով քաղաքի պնակավայրեր: Դրանցից գլխավորն է Կարսպագարին: Նրա սկզբնական անունն էր Կարս-Ջյուկկադրիյե: Այժմ կոչվում է Կադիոյի: 1468 թ. Դաշտային և Լեռնային Կիլիկիային և Հյուսիսային Ասորիքի բնակավայրերին տիրացած Տյուկկադրիոյու Օաֆսուվար բռնապետի եղբայր Հասան բեյը, դեպի Վրաստան կատարած արշավանքից վերադարձին, Կարսում բնակություն հաստատած թուրքմենների մի մասին իր հետ Կիլիկիա բերելով բնակեցրել էր այնտեղ: Իմջպես երևում է, Կարսանտը բնակավայրում և Ադամա քաղաքից հյուսիս, 10 կմ հեռու Կարսը գյուղում ապրող թուրքմենների մայրիկները Կիլիկիա են եկել Կարսից:

կա վանքում Բասիլ գրչի ընդօրինակած վերոհիշյալ Ավետարանի հիշատակարանում³⁴։ Թուրքերը վանքի անունն աղավաղելով, այն վերածափել են իրենց լեզվին հարմար արտաբերմամբ։ Լիսանկա վանքի գտնված գյուղն այժմ կոչվում է Ուզուն-կույու (Uzunkeyu)։ Այնպիսի հիշատակ՝ 8 կմ, Բարձրբերդից՝ հարավ-արևելք՝ 12 կմ և Կոստանդնուպոլսից հարավ արևելք՝ 9 կմ հեռու։

Լիսանկա վանքի կառուցման մասին հետևյալն է գրել Սամուել Ամեցին. «ՌՄԿԵ. Դի ԶԺԲ (1263) թվին... Դի տյուն ամի փոխեցաւ առ Քրիստոս Կոստանդին աւագ պարոնն և թագաւորահայրն՝ ալտորեալ բարոջ ծերութեամբ և լի աւուրբք։ Ծինեաց գտուրբ ուխտն խորին. և առընթեր մին զՄիսկեցերն մակ զԼիսանկան»³⁵։

Այժմ Լեոնային Կիլիկիայում այլևս չկան քրիստոնյա հայեր։ Հանգամանքների բերումով անցյալում մրանց մի մասը դավանափոխ է եղել և ընդունել մահմեդականություն։ Արդի *Միփանտերե* (Հին Հայոց *Սուրբ Անդրե*) գյուղի բնակիչներն անցյալում ամբողջ գյուղով միասին դավանափոխ եղած հայերի հետնորդներն են։ Նույնը կարելի է ասել մակ *Թափան գյուղի* արդի բնակիչների մասին։ Ամհաշվելի է Լեոնային Կիլիկիայի անցյալում դավանափոխ եղած հայերի թիվը։ Կիլիկիայի հայկական թագավորության անկումից հետո, դարերի ընթացքում Բարձրբերդ գավառի տեղանունները հարմարվել կամ հարմարեցվել են թուրքերենին և այդ ձևով պահպանվել մինչև մեր օրերը։ Այս գործին իրենց մասնակցությունն են բերել տեղի դավանափոխ հայերը։

Անունը քիչ փոփոխության ենթարկված վայրերից մեկն էլ Լեոնային Կիլիկիայի Գոմե-րի ամրոց-վանքն էր։ Մինչև վերջին տարիներն այն կոչվում էր Գիրե-կալե (Gire kale), այժմ՝ *Ենիքեո կալեսի* (Yenikkoy kalesi) և գտնվում է *Կարսանտրից* հարավ-արևելք և *Մազլիլ* (Mazilik) գյուղից հյուսիս, *Կըզըլ-գեդիկ* (Kizilgedik) գյուղաքաղաքի մոտ։ Պարսիս գետի աջակողմյան օժանդակներից Դոդան-սու (Dogan su) գետակը Բարձրբերդի առաջ Կարսի գետակի հետ միամալուց հետո, այստեղ՝ մեղ, խորը և ահագնատեսիլ ժայռերով դարձնալով մի ձորի միջով հոսում է դեպի հարավ-արևելք և միանում Պարսիս գետին։

³⁴ Տե՛ս ծան. 26։

³⁵ Սամուել քահանայի Ամեցյու Հաւքմունք Դի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 151։

Վանքի Լիսանկա կամ Լիսոնկա անունը «լուսնակա» բառի զավառաբարբառային ձևն է։ Լուսնակայի և լուսնի հոմանիշներից մեկն է «Տիկին երկնից»-ը։ Դա համարվել է Աստվածամոր կամ Աստվածածնի խորհրդանշաններից մեկը։ Թագավորահայր Կոստանդին մեծ իշխանի կառուցած կամ վերակառուցած երեք վանքերի հովանիների թվում, անպատճառ առաջին տեղն էր զբաղում Ս. Աստվածածինը։ Ուստի՝ պատահական չպետք է համարել Լիսանկա վանքի անվան առաջնությունն Աստվածածնի հետ։ Պետք է ավելացնել, որ Կոստանդին մեծ իշխանի կառուցած վանքերի թուրք հովանիները «լուսավորիչներ» կամ «լուսատուներ» են եղել։ Դրանց թվում Միակեցեր ուխտինը՝ Ս. Աստուածածին, Ս. Գրիգոր և Քրիստոս Աստուծոյ մերոյ։ Խորին անապատինը՝ Ս. Աստուածածին, Ս. Գրիգոր և Ս. Նշան։ 1269 թ. երկրաշարժի հետևանքով ավերվելուց և վերանորոգվելուց հետո մնում են միայն Ս. Կարապետ և Ս. Նշան՝ եկեղեցիները։

Բարձրբերդի իշխանության տիրույթներում գտնվող Գոմեր Ակներ, Պողոսական և այլ վանքերի հովանիների թվում Ս. Աստվածածին անունը զբաղվել է առաջին տեղը։ Միակեցեր ուխտի հովանին Դեխտուն էր։ Այն կազմված էր Ս. Աստվածածնից, Ս. Հովհաննու Կարապետից և Հիսուս Քրիստոսից։ Պարսիս գետից արևմուտք 3 կմ հեռու գտնվող Ուզունկույու գյուղում դեռ պահպանվել են ավերված Լիսանկա վանքի և մի բերդի մնացորդները։

Բարձրքերդում, Գոմերում և Տիրոջ գյուղերում մկարագարդված ձեռագիր մատյանների մանրամկարներում, ժայռոտ լեռան լանջերի տեսարանները բնական են և մկարված են կարմիր գետակի ձորի քարափների բնամկարից: Երկաթի հանքաքարով շատ հարուստ է Բարձրքերդի գավառը: Այդ է պատճառը, որ «կարմիր» են ժայռերն ու քարերը: Ուշագրավ են Ավետիք ծաղկողի մկարագարդած «Սմբատ Գունդստապլի Աւետարանի»³⁶ մանրամկարներից «Ղազարոսի յարութիւնը»:

Մանրամկարում Ղազարոսի հարությունն արես կատարվում է Կիլիկիայի կարմիր գետի գետանցքի լանջերի քարափներում: Մանրամկարում՝ ժայռերը գունավորված են «կարմիր գույնով», որը պատահական չէ: Բարձրքերդի գավառում, հատկապես Տիրոջ գյուղի և Գոմերի գտնված շրջանը լի է անհամար «գոմեր»-ով: Տեղանվան «Գիրե» հընչյունը, *Գոմերի* աղավաղված ձևն էր և թուրքերենում դա չունի ոչ մի իմաստ:

Լեռնային Կիլիկիայում, հատկապես Բարձրքերդի գավառում էր հիմնված Ռուբինյան իշխանությունը: Մինչև վերջ էլ այստեղ էր գտնվում Կիլիկիայի Հայկական պետության կորիզը: Այդ էր պատճառը, որ Կիլիկիայի Հայկական հերալդիկայում միայն Հայ արքաների զինանշաններին էր մեմաշնորհված «կարմիր և ոսկու» գույները:

³⁶ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. հմր. 7644, 1260-1270 թթ.: